


ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՍՆՏՈՒԿ

“ՅԱՐԱՏԵԻՈՒԹԻՒՆ”



ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ



ՏՊԱԳՐ. ԶԱՐԵՂ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ  
ԳԱՀԻՐԷ, 1914



# ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ “ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ”

## ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

### Գ Լ Ո Ւ Խ Ա .

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՄԱՏԱԿ «ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ» ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԻՆ

#### Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 1

Յարատեւութիւնն ինայողական Սնուկը, որ հիմնուած է 1907 ին Կիզէ-Գահիրէի Մարտեան Անանուն Ընկերութեան պաշտօնեաներու միջեւ, վերանաստասուեցաւ 1913 Սեպտ. 14 ին Հայ Ազգային Մրահին մեջ գումարուած Արտակարգ Ընդհանուր ժողովին կողմէ:

Սոյն ընկերութիւնը պիտի ղեկավարուի յետագայ պայմաններով, որոնք օրէնքի ոյժ ունին անդամներու միջեւ:

Ընկերութեան կեդրոնատեղին է ի Գահիրէ-Կիզէ:

#### Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 2

Սոյն ընկերութեան նպատակն է միացնել Անդամներու կողմէ խնայուած եւ Սնուկին վնարուած գումարները, օգտագործել զանոնք ի շահ իրենց եւ այս կերպով պատրաստել անոնց դրամական նեցուկ մը ապագային համար:

### Գ Լ Ո Ւ Խ Բ .

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ .- ԸՆԴՈՒՐՆԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՅՄԱՆՆԵՐԸ

#### Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 3

Ընկերութիւնը կը բաղկանայ, ոչ սահմանափակ բուով, բաժնեկից եւ պատուակալ անդամներէ:



Գահիրե-Կիզեի Մարտեան Անանուն Ընկերութեան ամսականաւոր պաշտօնեաները միայն կրնան ընդունուիլ ընկերութեան մէջ իբրեւ բաժնեկից անդամներ:

Պատուակալ անդամներն անոնք են որոնք բարոյապէս կամ ներքապէս կը սասարեն ընկերութեան բարգաւաճումին, առանց ո եւ է ակնկալութեան:

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 4

Իւրաքանչիւր բաժնեկից անդամ պարտաւոր է սնունկին վնարել ամսական 10 եգիպտական դահեկան առ նուազն, որ է մեկ բաժնի արժէքը: Իւր վնարման փոխարեն կը ստանայ կտրուաւոր տեսքէ մը փրցուած եւ ընկերութեան կնիքն ու նախագահին եւ արկղակալին ստորագրութիւնները կրող ընկալագիր մը:

Այս վնարումները պէտք է կատարուին իւրաքանչիւր ամսուան առաջին օրը, եւ կ'արձանագրուին մասնաւոր տուտարի մը մէջ, վնարողին պահանջին:

Ամէն անդամ որ կը թեքանայ այս որոշուած օրին ընելու իր վնարումը, կ'ենթարկուի 10 0/0 տուգանքի:

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 5

Ոչ մեկ անդամ իրաւունք ունի քան բաժնէ աւելի ունենալու: Փետրուար եւ Յուլիս ամիսներու սկիզբը բաժնեկից անդամները կրնան աւելցնել իրենց բաժիններու թիւը, առանց վերոյիշեալ սահմանն անցնելու: Նոր անդամներու ընդունելութիւնը եւս տեղի կ'ունենայ յիշեալ քուականներուն:

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 6

Վարչական ժողովի ազդարարութեամբ ընկերութենէն կը վտարուին բոլոր այն անդամները, որոնք կամովին վնաս կը հասցնեն ընկերութեան շահերուն:

Այս կերպով վտարուած, ինչպէս նաեւ իրենց կամով անդամակցութենէ հրաժարած անդամներուն կը վնարուի մինչեւ այն օր իրենց պահանջին գումարը, չսան առ հարիւր (10 0/0) զեղչելի վերջ:



Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 7

Երբ բաժնեկից անդամ մը կը դադրի Գանիրե-Կիզէի Մարոսեան Անանուն Ընկերութեան հով պատճօնեայ ըլլալէ, եւ կամ կը տեղափոխուի յիշեալ ընկերութեան որ եւ է մէկ մասնանիւղին մէջ, կը դադրի նաեւ անդամակցութենէ: Յարատեւութիւնը իրեն կը վնարէ ամբողջովին իր պահանջը, առանց որ եւ է զեղշի, եւ Վարչական Ժողովը կ'որոշէ վնարելիք շահաբաժինը՝ նոյն տարե-  
տեղանին համար:

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 8

Անդամակցութենէ դադրած կ'ըլլայ նաեւ մեռնող անդամ մը, եւ իւր պահանջը կը վնարուի իր ժառանգորդներուն, 7րդ յօդուածին համաձայն:

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 9

Երբ պատահի որ Ընկերութիւնը հարկ եղած գումարը պատ-  
րաստ չունենայ այս վնարումներն իսկոյն ընելու, Վարչական Ժո-  
ղովն իրաւունք ունի մինչեւ երեսուն օր յետաձգելու:

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 10

Ամեն պարագայի մէջ, Վարչական Ժողովը մասնաւոր ծա-  
նուցագիր մը կ'ուղղէ վնարուած կամ դադրած անդամին, հրաւի-  
րելով զայն ստանալու իր հաշիւը: Եթէ յիշեալ ծանուցագրէն մին-  
չեւ մէկ տարի գանձումը տեղի չունենայ, այս գումարներն անդառ-  
նալիքէն կը մնան սեփականութիւն սնուկին:

Գ. Ն. Ս. Ի. Խ. Գ.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 11

Ընկերութիւնը կը ղեկավարուի Վարչական Ժողովի մը կողմանէ, որ կը բաղկանայ նախագահէն, ընտրուած փոխներու



առ նուազն երեք քառորդի մեծամասնութեամբ, եւ վեց անգամ-  
ներէ՝ որոնք կ'ընտրուին փոփոխութեամբ:

Ընտրութիւնները տեղի կ'ունենան Ընդհանուր ժողովի կող-  
մանէ, մասնակից անդամներու միջեւ եւ գաղտնի փոփոխութեամբ:

Երեք առաջին փոփոխութեամբ բացարձակ մեծամասնութիւն  
չի գոյանայ, տեղի կ'ունենայ երկրորդ փոփոխութիւն եւ այս ան-  
գամ ընտրութիւնը վաւերական է համեմատական մեծամասնութեամբ:

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 12

Ընկերութեան նախագահ ընտրուելու համար հարկ է.

1. Մասնակից անգամ ըլլալ «Յարատեւութիւն»ի.
2. Առնուազն հինգ տարի անընդհատ պաշտօնավարած ըլ-  
լալ Սարսուտան Անանուն Ընկերութեան մօտ ի Գանիրէ-Կիզի.
3. Գոնէ 30 տարեկանն անց ըլլալ:

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 13

Վարչական ժողովի անգամ ընտրուելու համար նախորդ  
յօդուածին մէջ յիշատակուած պայմանները լրացնելու է: Հարկ է-  
ղած տարիքը պիտի ըլլայ 20 եւ պաշտօնավարութիւնը երկու տարի  
առնուազն:

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 14

Վարչութիւնը իւր դիւանը կը կազմէ բաղկացած նախա-  
գահնէն, Քարտուղարէ մը եւ Արկղակալէ մը:

Նախագահը կը հսկէ եւ գործադրել կուտայ ժողովին կող-  
մանէ տրուած որոշումները:

Քարտուղարին պաշտօնն է կատարել քլրակցութիւնն ու  
հաշուակալութիւնը:

Արկղակալը կը գանձէ ամսական բաժնեվճարները եւ Ըն-  
կերութեան բոլոր պահանջները եւ նախագահին հրահանգին համա-  
ձայն կը կատարէ ընկերութեան հաշուոյն տեղի ունենալիք բոլոր  
վճարումները:



Յ 0 7 Ո Ւ Ա Մ 15

Ընկերութեան գործերու վերաբերեալ բոլոր քղթերը պէ՛տ էն ստորագրուած ըլլալ Նախագահէն, Արկղակալէն եւ Քարտուղարէն: Պիտի գործածուի կնիք մը հետեւեալ արձանագրութեամբ, հայերէն եւ գաղղիերէն, “Խնայողական Սնուկ Յարատեւութիւն, Գահիրէ”:

Այս կնիքը չորս կտորէ կը բաղկանայ (կտրէն զատ) եւ ամեն մէկ կտոր կը յանձնուի դիւանի մաս չի կազմող անդամի մը:

Յ 0 7 Ո Ւ Ա Մ 16

Վարչական ժողովը կը գործադրէ ընկերութեան բարւո՛ք դեկավարման հարկ եղած բոլոր միջոցները:

Նա կատարեալ իրաւասութիւն ունի անդամները դրամական տուգանքի դատապարտելու, որոշելու անոնց ընդունելութիւնը կամ վճարումը, ինչպէս նաեւ ընթացիկ ծախքերու համար պէ՛տ չեղած դրամագլխին գործածութիւնը:

Յ 0 7 Ո Ւ Ա Մ 17

Վարչութեան անդամները պարտադրուած են, առաջին տարեշահին համար, ղեկավարել ընկերութեան գործերն առանց որ եւ է վարձատրութեան: Յաջորդ տարեշահներու համար այս պարտադրութենէն ազատ են:

Յ 0 7 Ո Ւ Ա Մ 18

Վարչութիւնը կը զուճարուի կանոնաւորաբար, առանց մասնաւոր հրաւերի, ամեն ամիս, բացի ստիպողական պարագաներէ: Իր նիստերը վաւերական են, երբ անդամներու զոնէ երեք քաւորը ներկայ են:

Որոշումները կը տրուին ձայներու մեծամասնութեամբ: Չայներու հաւասարութեան պարագային Նախագահին ձայնը գերակշիռ է:



Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 19

Հրաժարման կամ մահուան պարագային, վարչութիւնը կրնայ իր բիւր լրացնել հրաւիրելով այն քեկնածուները, որոնք վերջին ընդհանուր ժողովին մեջ ընտրուած անդամներէն յետոյ՝ առաւելագոյն ֆուէ ստացած են:

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 20

Վարչական ժողովը կը վերանորոգուի ամեն տարի ընդհանուր ժողովի կողմանէ: Հին նախագահը եւ անդամները վերընտրելի են:

Գ Լ Ո Ւ Թ Գ.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԻՑ.- ԾԱՇԸ

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 21

Արձանագրուած բաժիններու ամբողջութիւնը կը կազմէ ընկերութեան դրամագլուխը:

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 22

Ամեն տարուայ վերջ, վարչութիւնը կը կատարէ գոյներու վիճակագրութիւնը եւ կը պատրաստէ հաշուեկէիտը, որ երեւան կը բերէ ընկերութեան վիճակը:

Ձուտ շահը, եթէ կայ, կը բաժնուի բաժնեկից անդամներու իւրաքանչիւրի պահանջի գումարին համեմատ եւ կը գրուի իրենց հաշուոց պահանջին: Այս կերպով ընդհանուր շահը կը բարդուի դրամագլխին վրայ:

Պատահական նուիրատուութիւններ, ընկերութեան արժեքուղբերու վիճակահանութենէ շահուած պարգեւներ եւ բացառիկ ո եւ է հասոյթներ կը նկատուին իբր շահ:

Ընկերութեան դրամագլուխը կը շահագործուի վարչութեան ձեռքով եւ հսկողութեամբ:



Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 23

1913 Յունուար 1էն սկսեալ հինգ տարուան շրջան մը լրանալուն, բաժնեկից անդամներն արտօնեալ են, Սնտուկէն առանց որ եւ է գեղչի քաշելու կամ հոն բողելու ամբողջութիւնը կամ մեկ մասն իրենց պահանջին:

Այս շրջանն անցնելէ յետոյ Ընդհանուր ժողովը կ'որոշէ երկրորդ շրջան մը իր պատշաճ դատած տեսողութեամբ:

Գ Ղ Ո Ւ Թ Ե .

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 24

Ամեն տարի, Մարտի առաջին կիրակին, բաժնեկից Անդամները Ընդհանուր ժողով կը գումարեն:

Առ այս Վարչութիւնը մասնաւոր յայտարարագիր կը ցրուէ 15 օր առաջ:

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 25

Ընդհանուր ժողովը իր դիւանը կ'ընտրէ ձայներու մեծամասնութեամբ:

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 26

Ընդհ. ժողովին որոշումները վաւերական են միայն երբ բաժնեկից անդամներուն զոնէ երեք քառորդը ներկայ են եւ կամ իրենց ձայները ներկայացուցած են, Նախագահին ուղղուած նամակով:

Ոչ ոք իրաւունք ունի երկու ձայնէ աւելի ունենալու:

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 27

Վինարանութիւնները կ'ամփոփուին արձանագրութեանց մասնաւոր տեսակի մը մէջ եւ կը ստորագրուին Նախագահին ու Ընդհ. ժողովի Գիւանին անդամներէն:



Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 28

Ընդհանուր ժողովը կը լսէ վարչութեան տեղեկագիրը սահող շրջանի մասին, կը վաւերացնէ հաշիւները եւ կը սնօրինէ ձայներու մեծամասնութեամբ այն բոլոր միջոցները որոնք կը շահագրգռեն ընկերութիւնը:

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ 29

Արտակարգ Ընդհանուր ժողով կրնայ գումարուիլ վարչութեան կողմանէ, ամէն անգամ որ այս վերջինը կարեւոր դասէ:

Արտակարգ Ընդհանուր ժողով կը գումարուի նաեւ երբ բաժնեկից անդամներու գոնէ երկու երրորդը պահանջեն:

Գանիրէ, 14 Սեպտ. 1913